Ծանոթագրություն 1 «Իրավական դաշտ»

«ԲԼԵՍՍ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Կազմակերպություն կամ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է 19.02.2007թ-ին կայացած Կազմակերպության հիմնադիրների թիվ 1 ժողովի որոշմամբ և գրանցվել ՀՀ կենտրոնական բանկում՝ ԿԲ խորհրդի 2007թ ապրիլի 17-ի թիվ 115Ա որոշմամբ (գրանցման վկայականի համարը՝ 18), ստանալով թիվ 18 անժամկետ լիցենզիան:

Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում հիմնականում զբաղվել է ձեռնարկատիրական և սպառողական վարկերի տրամադրմամբ:

Կազմակերպությունը որպես հարկատու ստացել է ՀՎՀՀ՝ 02702899, հաշվառված է ՊԵԿ համապատասխան տեսչությունում:

Կազմակերպությունը իր ծառայություններն է մատուցում գլխամասային գրասենյակի և թվով 8 մասնաճյուղերի միջոցով:

Կազմակերպության գլխամասային գրասենյակի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 1 շենք, թիվ 274/1 տարածք:

Կազմակերպության «Սիսիան» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Սիսիան, Իսրայելյանի փողոց թիվ 33/2:

Կազմակերպության «Նոր Նորք» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Բաղալ Մուրադյան փողոց թիվ 3-71:

Կազմակերպության «Ալավերդյան» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Տպագրիչների փողոց 9 շենք, թիվ 70 :

Կազմակերպության «Աջափնյակ» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Մարգարյան փողոց, թիվ 22/7 :

Կազմակերպության «Արարատ» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ք.Արարատ, Շահումյան փողոց, 55 շենք, թիվ 5

Կազմակերպության «Մարտունի» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ք.Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 29/1

Կազմակերպության «Հրազդան» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ք.Հրազդան,Միկրոշրջան թաղ., 4-րդ փողոց, թիվ 2

Կազմակերպության «Հրազդան» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ք.Գյումրի,Գորկու փողոց,73շ., թիվ 1 տարածք

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ունեցել է 48 աշխատակից, որից 11-ը՝ սպասարկող անձնակազմ:

Ծանոթագրություն 2 «Հաշվապահական ստանդարտներ»

Ներքոհիշյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվետու ժամանակաշրջանում կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների կազմման էական դրույթների նկատմամբ:

2.1 Ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ներկայացումը

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտներին համապատասխան և հաշվետվությունների ձևերը համապատասխանում են ՀՀՄՍ պահանջներին:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (հազարների ճշտությամբ):

2.2 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Կազմակերպության գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է, որ Կազմակերպության ակտիվները պետք է իրացվեն և պարտավորությունները մարվեն վերջինիս գործունեության բնականոն ընթացքում:

2.3 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ընդգրկում են դրամարկղը և բանկերում գտնվող բանկային հաշիվները:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվեկշռում ճանաչվում և չափվում են ստացման հատուցման իրական արժեքով:

2.4. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Եթե հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ժամանակավոր չհամարվող պայմանների արդյունքում, համապատասխան ակտիվը նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)
Շենքեր	20
Հաշվապահական և համակարգչային տեխնիկա	1
Այլ հիմնական միջոցներ	8
Փոխադրամիջոց	8
Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ներդրումները	20

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք տեղի են ունեցել: Կապիտալ բնույթի վերանորոգման ծախսերը ներառվում են ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կհոսեն դեպի Կազմակերպություն: Կապիտալ վերանորոգումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օտարումից ծախսերը և եկամուտները որոշվում են՝ համեմատելով ակտիվի օտարումից զուտ մուտքերն ու հաշվեկշռային արժեքը և ներառվում են գործառնական եկամտի մեջ:

Երբ վաճառվում են վերագնահատված ակտիվները, օտարված ակտիվին վերագրելի և վերագնահատման պահուստում ներառված գումարները վերագրվում են չբաշխված շահույթին:

2.5. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտվիները սկբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտվիները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող

ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյո՞ք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Համակարգչային ծրագրերի պահպանմանը վերագրելի ծախսերը ծախս են ճանաչվում առաջացման պահին:

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Դրույքաչափ (%)
Համակարգչային ծրագրեր	10	10

2.6 Վարկեր և այլ փոխառություններ

Վարկերը և այլ փոխառությունները հաշվեկշռում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, հանած օրենսդրությամբ սահմանված, դրանց գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստները:

2.7 *Արժեզրկման պահուստ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում և ճանաչում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով սպասվող պարտքային կորուստը ՖՀՄՍ 9 ստանդարտի համաձայն: Արժեզրկումը գնահատվում և ճանաչվում է մինչև արժեզրկման անկողմնակալ վկայության տեղի ունենալը: Արժեզրկման վերաբերյալ գնահատումներ և դասակարգումներ արվում են ֆինանսական ակտիվի ճանաչման պահին: Արժեզրկման նպատակով կատարված դասակարգումից կախված փոխվում է նաև տոկոսային եկամտի հաշվարկը:

Ֆինանսական ակտիվներ

ՖՀՄՍ 9 ստանդարտի համաձայն ֆինանսական ակտիվների գծով սպասվող պարտքային կորստի հաշվարկման համար Կազմակերպությունը սահմանում է հետևյալ հասկացությունները.

“Սպասվող պարտքային կորուստ”՝ պարտքային կորուստների միջին կշռված մեծություն, որը հաշվարկվում է դեֆոլտի (պարտքային կորուստների) հավանականությամբ կշռման միջոցով: ՍՊԿ գնահատվում է առկա այն տեղեկատվության վերլուծության հիման վրա, որի հավաքագրումը հնարավոր է առանց անհարկի ծախսումների ու ջանքերի: ՍՊԿ գումարը պետք է արտացոլի կորուստի տեղի ունենալու հավանականությունը:

Ակտիվների պորտֆելային գնահատման ժամանակ յուրաքանչյուր ակտիվի գծով ՍՊԿ հաշվարկվում է որպես հետևյալ երեք բաղադրիչների արտադրյալ.

ա) ակնկալվող դրամական հոսքեր, բերված ներկա արժեքի սկզբնական կամ տվյալ պահին կիրառելի վերանայված արդյունավետ տոկոսադրույքով,

բ) հաջորդ 12 ամսվա կամ ակտիվի մնացած ժամկետի համար հաշվարկված դեֆոլտի (պարտքային կորուստների) հավանականություն,

գ) դեֆոլտային ակտիվների գծով կորուստների մեծություն:

“Դեֆոլտային վարկ”՝ վարկ, որի գծով բավարարված է հետևյալ պայմաններից մեկը.

- վարկի տևողության ընթացքում անընդմեջ ժամկետանց օրերի թիվը կազմել է 91 կամ ավել,

- հաշվետվության օրվա դրությամբ վարկառուի կամ իր բիզնեսի վերաբերյալ այնպիսի բացասական տեղեկատվության առկայություն, որը կարող է հանգեցնել վարկի դեֆոլտային դառնալուն, այդ թվում՝ մակրոտնտեսական պայմանների էական վատացում,
- հաշվետվության օրվա դրությամբ առկա է Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված սուբյեկտիվ չափանիշներից մեկը:

"Պարտքային ռիսկի էական ավելացում"՝՝ հաշվետվության օրվա դրությամբ վարկի գծով հետևյալ հանգամանքներից մեկի առկայությունը.

- վարկի տևողության ընթացքում անընդմեջ ժամկետանց օրերի թիվը կազմել է 31-90 օր,
- գրավի արժեքի էական նվազում, երաշխավորների ֆինանսական վիճակի էական վատացում, որի մասին առկա է փաստաթղթավորված տեղեկատվություն,
- վարկառուի կամ իր բիզնեսի վերաբերյալ այնպիսի բացասական տեղեկատվության առկայություն, որը կարող է էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական պարտավորությունների մարման վրա, այդ թվում՝ մակրոտնտեսական պայմանների վատացում,
- Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված այլ սուբյեկտիվ չափանիշներ:

"Պարզեցված մոտեցում"՝ մոտեցում, որը կիրառվում է դեբիտորական պարտքերի համար: Այս դեպքում Կազմակերպությունը չի հետևում տվյալ ակտիվների գծով վարկային ռիսկի փոփոխություններին, փոխարենը՝ Կազմակերպությունը ճանաչում է կորուստի պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով ֆինանսական ակտիվի ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող պարտքային կորուստներից:

"Ցածր պարտքային ռիսկի հետ կապված պարզեցման մոտեցում"՝՝ մոտեցում, որը կիրառվում է այն ակտիվների համար, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ ունեն Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված արտաքին վարկանիշ: Կազմակերպությունը չի հետևում տվյալ ակտիվների գծով վարկային ռիսկի փոփոխություններին և ճանաչում է կորստի պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով ֆինանսական ակտիվի 12 ամսվա սպասվող պարտքային կորուստներից:

"Ձեռքբերված կամ սկզբնապես արժեզրկված ակտիվի մոտեցում"՝՝ մոտեցում, որը կիրառվում է, երբ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ այն գնահատվել է որպես արժեզրկված ակտիվ՝ կապված կոնտրագենտի մեկ այլ արժեզրկված վարկ ֆինանսավորելու, կոնտրագենտի, ինչպես նաև կոնտրագենտին փոխկապակցված անձանց զգալի ֆինանսական դժվարությունների հետ, կամ պայմանավորված այլ սուբյեկտիվ չափանիշներով: Այս ակտիվները, ի սկզբանե, ճանաչվում են իրական արժեքով, իսկ ակնկալվող դրամական հոսքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով վարկային ռիսկով կշռված արդյունավետ տոկոսադրույքը: Սպասվող պարտքային կորուստը որոշվում է այն ժամանակ, երբ կանխատեսվող դրամական հոսքերը նվազում են սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող հոսքերի համեմատ:

“Ընդհանուր մոտեցում”՝ տվյալ մոտեցման շրջանակներում արժեզրկումից կորստի հաշվարկը կատարվում է եռափուլ գործընթացով, որն արտահայտում է ակտիվի պարտքային ռիսկի փոփոխությունը:

Արժեզրկման խմբային գնահատում իրականացնելու նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում են միատարր խմբերի Կազմակերպության ներքին ընթացակարգերի հիման վրա, որոնք կարող են հաշվի առնել ֆինանսական ակտիվների այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են՝ ակտիվի տեսակը, ժամկետանց կարգավիճակը, վարկառուի գործունեության ճյուղը և այլ գործոններ:

Վարկերի խմբային գնահատման նպատակով Կազմակերպությունը դիտարկել է հետևյալ խմբերը՝

- մինչև 5 մլն դրամ գումարով և մինչև 1 տարի տևողությամբ վարկեր, որոնք ապահովված են թանկարժեք մետաղներով,

- մինչև 5 մլն դրամ գումարով, 1 տարի և ավել տևողությամբ վարկեր, որոնք ապահովված են թանկարժեք մետաղներով,

- մինչև 5 մլն դրամ գումարով վարկեր, որոնք ապահովված են այլ գրավներով,

- 5 մլն դրամ և ավել գումարով վարկեր:

Վարկային պորտֆելի արժեզրկման պահուստի գումար[1] առ 31.12.23թ., ՀՀ դրամ

	Մինչև 5 մլն դրամ վարկեր, ապահովված այլ գրավով	Մինչև 5 մլն դրամ կարճաժամկ. վարկեր, ապահովված ոսկով	Մինչև 5 մլն դրամ երկարաժամկ. վարկեր, ապահովված ոսկով	5 մլն դրամ և ավել գումարով վարկեր	Ընդամենը
I փուլ	2,059,953	7,076,564	21,477,493	41,082,529	71,696,538
II փուլ	371,198	12,953	545,143	5,384,913	6,314,207
III փուլ	0	7,539,166	22,272,648	25,146,293	54,958,107
Ընդամենը	2,431,151	14,628,683	44,295,285	71,613,734	132,968,853

Այն վարկերի նկատմամբ, որոնք գերազանցում են Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված անհատական գնահատման շեմը, ինչպես նաև արժեզրկված վարկերի նկատմամբ կիրառվում է անհատական մոտեցում:

Սպասվող պարտքային կորուստների գնահատումը Կազմակերպությունն իրականացնում է պատմական տվյալների, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների (օրինակ՝ տնտեսական ակտիվության ցուցանիշ, սպառողական գների ինդեքս, տրանսֆերտներ, և այլն) կանխատեսումների հիման վրա՝ հաշվի առնելով մակրոտնտեսական 4 սցենար. բազային, լավատեսական, վատատեսական և

[1] Առանց 100% -ով պահուստավորված վարկերի պահուստի:

խիստ վատատեսական: Արժեզրկման պահուստի հաշվարկի նպատակով նշված սցենարներով ստացված արդյունքները խմբավորվում են՝ հիմք ընդունելով համապատասխան տեսակարար կշիռները:
Ընդհանուր մոտեցման շրջանակներում առանձնացվում է ակտիվների արժեզրկման 3 փուլ.

ա) առաջին փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց պարտքային որակը սկզբնական ճանաչումից հետո էապես չի նվազել, կամ որոնց նկատմամբ կիրառվել է Ցածր պարտքային ռիսկի հետ կապված պարզեցման մոտեցում,

բ) երկրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով սկզբնական ճանաչումից հետո արձանագրվել է Պարտքային ռիսկի էական ավելացում, սակայն պարտքային կորստի վերաբերյալ օբյեկտիվ տվյալներ չկան,

գ) երրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով առկա են արժեզրկման վերաբերյալ օբյեկտիվ վկայություններ:

Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանվում են այն չափանիշները, որոնց առկայության դեպքում երրորդ և երկրորդ փուլում գտնվող ակտիվները կարող են վերադասակարգվել:

Առաջին փուլում գտնվող ակտիվների համար ճանաչվում է 12 ամսվա սպասվող պարտքային կորուստ, իսկ երկրորդ և երրորդ փուլերի ակտիվների համար՝ ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող պարտքային կորուստ:

Կազմակերպությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկի զսպման նպատակով: Տվյալ միջոցների թվում կարևոր տեղ է զբաղեցնում վարկերի վերադարձի ապահովումը գրավով և ապահովման այլ տեսակի միջոցներով: Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանվում են յուրաքանչյուր վարկատեսակի համար ընդունելի ապահովման միջոցները, դրանց գնահատման և փաստաթղթավորման կարգը: Կազմակերպության հիմնական ապահովման միջոցներն են թանկարժեք իրերի և անշարժ գույքի գրավը, ինչպես նաև երաշխավորությունները: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է վարկային պորտֆելի բաշխումն ըստ առանձին ապահովման միջոցների:

Վարկերի ապահովվածության վերլուծություն առ 31.12.23թ.

Հիմնական ապահովման միջոց	Վարկային պորտֆել ներկա արժեքով, ՀՀ դրամ	Պահուստի գումար, ՀՀ դրամ	Տվյալ ապահովման միջոցով ապահովված վարկային պորտֆելի մասնաբաժին
Թանկարժեք զարդեր	2,214,616,475	79,972,222	51.538%
Անշարժ գույք	1,953,701,126	50,565,842	45.466%
Փոխադրամիջոց	121,642,311	2,295,475	2.831%
Այլ գրավ	561,332	11,109	0.013%
Առանց գրավի	6,493,549	124,205	0.151%
Ընդամենը	4,297,014,794	132,968,853	100.0%

Պարտքային ֆինանսական ակտիվների գծով, որոնց հիմքում ընկած պայմանագրի երկրորդ կողմը հանդիսանում է ֆինանսական կազմակերպություն կամ պետություն, պահուստի հաշվարկման համար Կազմակերպությունը գնահատում է նշված ֆինասնական կազմակերպությունների գործունեությունը՝ հիմնվելով մի խումբ՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ցուցանիշների վրա, իսկ պետության դեպքում հաշվի է առնվում Մուդիզ վարկանիշային գործակալության կողմից տրվող՝ երկարաժամկետ արտարժույթային պարտատոմսերի վարկանիշները:

Այլ ֆինանսական ակտիվների գծով պահուստ առ 31.12.23թ., ՀՀ դրամ

	Գումար	Պահուստ
Բանկային հաշիվներ	81,216,590	320,116
Բանկային ավանդներ	808,688,737	7,792,526
Չօգտագործված վարկային գծեր	389,316,110	6,703,588

Վերը նշված ֆինանսական ակտիվները անհատապես արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Հաշվետվության օրվա դրությամբ Կազմակերպությունը չունի ձեռքբերված կամ սկզբնապես արժեզրկված ակտիվ:

Ծանոթագրություն 3 «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից	21771	15813	71167	173249

Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխատվություններից	164414	171353	688152	664358
Այլ տոկոսային եկամուտ				
Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական արժեթղթերից	130528	129905	519561	517041
	316713	317070	1278880	1354648

Ծանոթագրություն 4 «Տոկոսային և նմանատիպ ծախսեր»

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց	(136223)	(136110)	(537640)	(540738)
Տոկոսային ծախսեր կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց				(98346)
Այլ տոկոսային ծախսեր	(5736)	(6115)	(23971)	(23622)
	(141959)	(142225)	(561611)	(662706)

Ծանոթագրություն 5 «Շահույթ /վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից զուտ շահույթ/(վնաս)

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Շահույթ /վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից զուտ շահույթ/ վնաս	--	--	--	--
Շահույթ /վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ շահույթ/ վնաս	--	--	--	--
	--	--	--	--

Ծանոթագրություն 6 «Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Վաճառքի համար նախատեսված ներդրումների վաճառքից զուտ շահույթ/ վնաս	--	--	--	--
	--	--	--	--

Ծանոթագրություն 7 «Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Արտարժույթի առուվաճառքից ստացված զուտ շահույթ/(վնաս)	337	115	459	253
Արատրժույթի վերագնահատումից ստացվախ զուտ շահույթ/(վնաս)	2578	(2186)	162	(14732)
	2915	(2071)	3199	(14479)

Ծանոթագրություն 8 «Այլ գործառնական եկամուտ»

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Արտասովոր եկամուտներ	--	--	--	--
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	5641	4308	62164	16985
Այլ եկամուտներ	2883	1209	8216	8679
	8524	5517	70380	25664

Ծանոթագրություն 10 «Ընդհանուր վարչական ծախսեր»

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Ծախսեր անձնակազմի գծով	(137421)	(130182)	(373560)	(347572)
Կառավարչական ծախսեր	(16496)	(11535)	(81509)	(79334)
	(153917)	(141717)	(455069)	(426906)

Ծանոթագրություն 11«Այլ գործառնական ծախսեր»

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Վճարված տույժեր և տուգանքներ		(3)	(22)	(3)
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	(551)	(460)	(2549)	(1988)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(5606)	(7855)	(24114)	(25778)
Այլ ծախսեր	(168288)	(4563)	(188655)	(18192)
	(174445)	(12881)	(215340)	(45961)

Ծանոթագրություն 12 «Շահութահարկի գծով ծախս»

	01/10/23 31/12/23	01/10/22 31/12/22	01/01/23 31/12/23	01/01/22 31/12/22
Ընթացիկ հարկի գծով ծախս	(74836)	(71144)	(74836)	(71144)
Հետաձգված հարկի գծով ծախս	(1853)	1365	671	26441
	(1853)	(69779)	(74165)	(44703)

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ

	2023	ՖԱՄՀ ճանաչված	2022
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	38571		116612
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	-522		-21246
Զուտ հետաձգված հարկային ակտիվներ/ պարտավորություն	38049		95364

Ծանոթագրություն 13 «Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ

	31/12/23	31/12/22
Կանխիկ դրամական միջոցներ և դրան հավասարեցված վճարային փաստաթղթեր	5302	10224
Բանկային հաշիվներ բանկերում	81217	44702
Բանկերում բանկային հաշիվների միջոցների գծով ստացվելիք տոկոսներ	26	8
Տեղաբաշխված բանկային հաշիվների և այլ ավանդների գծով պահուստ	-320	-240
	86225	54694

Ծանոթագրություն 14 «Շահույթ /վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

	31/12/23	31/12/22
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	5049775	4335002
այլ երկրների պետական արժեթղթեր	--	--
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ	142101	135892
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	--	--
այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	--	--
ածանցյալ գործիքներ	--	--
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի գծով պահուստ	-	-
	5191876	4470894

Ծանոթագրություն 15 «Բանկերում տեղաբաշխված միջոցներ»

	31/12/23	31/12/22
Բանկերում ներդրված ավանդներ	803676	763976
Բանկերում ներդրված ավանդների գծով հաշվարկված տոկոսներ	5013	595
Դեպոնացված միջոցներ բանկերում	-7793	-11100
	800896	753471

Ծանոթագրություն 16 «Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ»

	31/12/23	31/12/22
Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներ	--	--
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և այլ փոխատվություններ	--	--
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ	--	--
	--	--

Ծանոթագրություն 17 «Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ»

	31/12/23	31/12/22
Տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ(ներառյալ ստացվելիք տոկոսագումարները)	4297015	4618805
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ	-132969	-163274
	4164046	4455531

Ծանոթագրություն 18 «Վաճառքի համար նախատեսված ներդրումներ»

	31/12/23	31/12/22
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	--	--
այլ երկրների պետական արժեթղթեր	--	--
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	--	--
այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	--	--
ածանցյալ գործիքներ	--	--
ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	--	--
դեպիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ ծան.9	--	--
	--	--

Ծանոթագրություն 19«Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»

	31/12/23	31/12/22
Ստացվելիք շահաբաժիններ	--	--
Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	--	--
Երաշխիքների գծով ստացվելիք գումարներ	--	--
Հեջավորման ածանցյալ գործիքներ	--	--
Ստացվելիք այլ գումարներ	--	--
Դեպիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ		

Ծանոթագրություն 20 «Վարձակալության գծով ստացվելիք գումարներ»

	31/12/23	31/12/22
Վարձակալության գծով ստացվելիք գումարներ	--	--
Չճանացված տոկոսային եկամուտներ	--	--
	--	--

Ծանոթագրություն 21 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

	31/12/23	31/12/22
Բռնագանձված գրավ	34884	34084
	34884	34084

Ծանոթագրություն 22 «Հիմնական միջոցներ և ոչ նյութական արժեքներ»

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Հող, շենք և գույք	Երկարաժամկետ օգտագործման իրավունքով պատկանող հիմնական միջոցներ	Համակարգչային սարքավորում	Փոխադրա-միջոցներ	Այլ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք *Նախորդ տարվա վերջին տվյալները*	*118862*	*328944*	*26262*	*101820*	*51088*	*626976*
Ավելացում	3069	16101	1522		2803	**23495**

Օտարում/դուրս գրում	3398	15721	3283		4026	**26428**
Հաշվեկշռային արժեք ***Ընթացիկ տարվա վերջի տվյալները***	***118533***	***329324***	***24501***	***101820***	***49865***	***624043***
Մաշվածք ***Սկզբնական մնացորդ***	***34737***	***96102***	***24021***	***21842***	***37995***	***214697***
Կուտակված ամորտիզացիա	6123	29541	3363	11160	2659	**52846**
Կուտակված արժեզրկում	3398	7468	3597		4026	**18489**
Մաշվածք ***Վերջնական մնացորդ***	***37462***	***118175***	***23787***	***33002***	***36628***	***249054***
Զուտ հաշվեկշռային արժեք ***Նախորդ տարվա վերջ***	**84125**	**232842**	**2241**	**79978**	**13093**	**412279**
Զուտ հաշվեկշռային արժեք ***Ընթացիկ տարվա վերջ***	**81071**	**211149**	**714**	**68818**	**13237**	**374989**

Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում

	Կապ.ներդրում	Ընդամենը
Ինքնարժեք		
Ինքնարժեք առ **01.01.2023թ.**	23183	23183
Ավելացումներ	-192	-192
Դուրս գրում		
Առ 31.**12.2023թ.**	22991	22991
Մաշվածություն		
Առ **01.01.2023թ.**	7215	7215
Մաշվածության գումար	1027	1027
Առ 31.**12.2023թ.**	8242	8242
Հաշվեկշռային արժեք		
Առ **01.01.2023թ.**	14749	14749
Առ 31.**12.2023թ.**	14749	14749

Ծանոթագրություն 23 «Այլ ակտիվներ»

	31/12/23	**31/12/22**
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	19487	5016
Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ	-195	-50
Արագամաշ առարկաներ	1258	1409
Այլ ակտիվներ		
	20550	6375

Ծանոթագրություն 24 «Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր»

	31/12/23	31/12/22
Բանկերից ներգրաված փոխառություններ	--	--
Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ	--	--
	--	--

Ծանոթագրություն 25 «Դրամային շուկայից ստացված այլ փոխառություններ»

	31/12/23	31/12/22
Ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառություններ	--	--
	--	--

Ծանոթագրություն 26 «Հաճախորդներից ներգրաված փոխառություններ»

	31/12/23	31/12/22
Ներգրավված ցպահանջ փոխառություններ		
Ներգրավված ժամկետային փոխառություններ (ներառյալ վճարվելիք տոկոսագումարները)	6060553	6051446
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ (ներառյալ վճարվելիք տոկոսագումարները)		
	6060553	6051446

Ծանոթագրություն 27 «Վարձակալության գծով պարտավորություններ»

	31/12/23	31/12/22
Անշարժ գույքի վարձակալության գծով	248761	265824
Տոկոսային արժեթղթեր	--	--
Թողարկված այլ արժեթղթեր	--	--
	248761	265824

Ծանոթագրություն 28 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր»

	31/12/23	31/12/22
Առանց տոկոսի արժեթղթեր	--	--
Տոկոսային արժեթղթեր	--	--
Թողարկված այլ արժեթղթեր	--	--
	--	--

Ծանոթագրություն 29 «Վճարվելիք գումարներ»

	31/12/23	31/12/22
Վճարման ենթակա շահաբաժիններ	--	--
Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	--	--
	--	--

Ծանոթագրություն 30 «Այլ պարտավորություններ»

	31/12/23	31/12/22
Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով	--	--
Կրեդիտորական պարտքեր	171952	165331
Այլ պարտավորություններ	1158	949
	173110	166280

Ծանոթագրություն 31 «Հետաձգված հարկային պարտավորություններ »

	31/12/23	31/12/22
Հետաձգված հարկային պարտավորություններ		

Ծանոթագրություն 32«Պահուստներ »

	31/12/23	31/12/22
Վարկային գծերի չօգտագործված մասի,այլ պայմանական ակտիվների պահուստներ	23368	24067
	23368	24067

Ծանոթագրություն 33 «Կանոնադրական կապիտալ»

Առ **31.12.23թ**-ը Ընկերությունում գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 1.700.000.000 ՀՀ դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրությանը, կանոնադրական կապիտալը բաղկացած է 100 (հարյուր) բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 17.000.000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կազմակերպության մասնակիցներն են՝

Մասնակցի անունը/անվանումը	**Բաժնետոմսերի քանակ (հատ)**	**Բաժնեմասի անվանական արժեքը (հազ.դրամ)**	**Ընդհանուր գումարը (հազ.դրամ)**
Հակոբ Աշոտի Հակոբյան	50	17.000.000	850.000.000
Արսեն Սեյրանի Միքայելյան	50	17.000.000	850.000.000
Ընդամենը	**100**		**1.700.000.000**

Ընկերության կանոնադրական կապիտալը իր մասնակիցների կողմից ներդրվել է ՀՀ դրամով, և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժիններ և կապիտալի այլ տեղաբաշխումներ ՀՀ դրամով:

Ծանոթագրություն 33 «Վերագնահատման պահուստներ»

	31/12/23	31/12/22
Վաճառքի համար նախատեսված ներդրումների վերագնահա-տումից առաջացած չիրացված շահույթ/ վնաս	-189826	-451228
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		
Այլ պահուստներ		
	-189826	-451228

Ծանոթագրություն 34 «Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերաբերյալ»

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների մասին ծանոթագրությունը կազմվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև մարման ամսաթիվը մնացած ժամանակաշրջանի մեթոդով:

Այս վերլուծությունում չեն ներառվում այն ոչ ֆինանսական ակտիվները, որոնք չունեն ժամկետայնություն:

Ակտիվներ	1 ամսից պակաս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-3 տարի	3 տարուց ավելի	Ընդամենը
Պահանջներ ռեզիդենտ բանկերի նկատմամբ	80000	50000	120000	553676		803676
Պահանջներ կառավարության նկատմամբ				57718		57718
Պահանջներ տրամադրված վարկերի գծով	103083	309435	1166818	802204	1225938	3607478
Պարտատոմսեր					5049775	5049775
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր						
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	25115	87856	56505			169476
ԸՆԴԱՄԵՆԸ	**208198**	**447291**	**1343323**	**1413598**	**6275713**	**9688123**

Պարտավո-րություններ	1 ամսից պակաս	1- 3 ամիս	3 ամսից 1 տարի	1- 3 տարի	3 տարուց ավելի	Ընդամենը
Պարտավորություններ ներգրավված փոխառությունների գծով		421437	1590000	2655000	1252395	5918832
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	72312					72312
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ	23771	98750	19390			141911
Ռեպո համաձայնագրերով ներգրավված արժեթղթեր						
Այլ պարտավորություններ	103558	7836	35262	90432	220193	457281
ԸՆԴԱՄԵՆԸ	199641	528023	1644652	2745432	1472588	6590336

Ծանոթագրություն 35 «Արտարժութային զամբյուղ»

Այս ծանոթագրությունում արտացոլվում են դրամային և արտարժութային ակտիվների և պարտավորությունների զուտ դիրքերը:

	Դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Սահմանափակ փոխարկելի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ	425,905	425,905	--	425,905
Պարտավորություններ	325,562	325,562	--	326,176
Զուտ արտարժութային դիրք	100,343	100,343	--	100,343

Ծանոթագրություն 36 «Տոկոսադրույքի ռիսկ»

Այս ծանոթագրությունում արտացոլվում են ակտիվների և պարտավորությունների միջին տոկոսադրույքները:

	մինչև 1 ամիս		1-3 ամիս		3 ամսից 1 տարի		1 տարուց ավելի	
	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի
Ներգրավված միջոցներ								
Դրամով							9,2	9,2
Արտարժույթով							8,9	8,9
Տեղաբաշխված միջոցներ								
Դրամով	17.9	22,9	16,9	18,9	16.2	16,8	14,0	15,4
Արտարժույթով						13,5	11,7	12,1

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայում առկա փոփոխությունների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքի և փոխարժեքի տատանումները: Կազմակերպությունը չի տեղաբաշխել և չի ստացել տատանվող տոկոսադրույքով վարկեր: Բացի փոխարժեքային ռիսկի կենտրոնացումներից, Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի այլ կենտրոնացումներ:

Ծանոթագրություն 37 «Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ»

Կազմակերպության կողմից տրամադրվել են վարկային գծեր, որոնց չօգտագործած մասը **31.12.2023թ**-ի դրությամբ կազմում է **397.116,0** հազ. ՀՀ դրամ, իսկ տրամադրված երաշխիքների մնացորդը կազմում է **1.666.452,0** հազ. ՀՀ դրամ : Նշված պոտենցիալ պարտավորությունների գծով կատարվել է պահուստավորում **23.368,0** հազ. ՀՀ դրամի չափով:

Ծանոթագրություն 38 «Ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռային հոդվածների կենտրոնացում»

Կազմակերպության տեղաբաշխված միջոցների կենտրոնացումը ըստ ճյուղերի /մայր գումարի մնացորդ/ **31.12.2023թ**. դրությամբ հետևյալն է՝

Գյուղատնտեսություն	**26.481,0** հազ ՀՀ դրամ
Հանքարդյունաբեչություն	**19.998,0** հազ ՀՀ դրամ
Շինարարություն-	**238.900,0** հազ ՀՀ դրամ
Առևտուր -	**43.905,0** հազ ՀՀ դրամ
Հանրային սննդի կազմակերպում	31.**484,0** հազ ՀՀ դրամ
ֆինանսական հատված-	**803.676,0** հազ ՀՀ դրամ
Մասնագիտական գործունեություն	**5.022,0** հազ ՀՀ դրամ
Հիպոթեքային վարկեր-	**870.342,0** հազ ՀՀ դրամ
Սպառողական վարկեր-	**2.904.640,0** հազ ՀՀ դրամ

Ծանոթագրություն 39 «Գրավադրված ակտիվներ»

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի մայր գումարների մնացորդը **31.12.2023**թ-ի դրությամբ կազմում է **4.449.304,0** հազ. ՀՀ դրամ, իսկ տրամադրված երաշխիքների մնացորդը կազմում է **1,666,452,0** հազ. ՀՀդրամ : Գրավադրված ակտիվների և ստացված երաշխավորությունների ետհաշվեկշռային արժեքը կազմում է **13.151.128,0** հազ. ՀՀ դրամ, որից՝

Ոսկյա իրեր -	**2,530,522,0 հազ.ՀՀ դրամ,**
Անշարժ գույք -	**5,439,963,0** հազ.ՀՀ դրամ,
Փոխադրամիջոցներ -	**335,068,0** հազ.ՀՀ դրամ,
Այլ հիմնական միջոցներ	**107.600,0** հազ.ՀՀ դրամ,
Այլ գրավ	**1.653.250,0** հազ.ՀՀ դրամ,
Ստացված երաշխավորություններ-	**3.084.725,0** հազ.ՀՀ դրամ:

Ծանոթագրություն 40 «Կապակցված կողմեր»

Կողմերը համարվում են կապակցված եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենա մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով կազմակերպության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, խորհրդի անդամները ինչպես նաև նրանց հետ կապակցված և նրանց կողմից վերահսկող այլ անձինք և կազմակերպությունները:

Մասնակիցներ

Հակոբ Հակոբյան	բաժնետեր
Արսեն Միքայելյան	բաժնետեր

Կազմակերպության հետ փոխկապակցված անձինք

«Քարավան» ՍՊԸ («ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ փոխատու)	միակ մասնակից՝ Հակոբ Հակոբյան

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Հայկ Ստեփանյան	գլխավոր տնօրեն-վարչության նախագահ
Լիլիթ Նաջարյան	գլխավոր հաշվապահ-վարչության անդամ
Հայկ Սարգսյան	վարչության անդամ

ԽՈՐՀՈՒՐԴ

Արսեն Միքայելյան	Խորհրդի նախագահ
Հակոբ Հակոբյան	Խորհրդի անդամ
Համլետ Սիմոնյան	Խորհրդի անդամ

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:

Այդ գործարքները ներառում են փոխառությունների տրամադրումը, վարկերի տրամադրումը և վարձակալական ծառայությունների մատուցումը:

Նշված գործարքները իրականացվել են շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

31.12.2023թ-ի դրությամբ Կազմակերպության հետ կապված կողմերի գործարքների գծով առկա են հետևյալ մնացորդները:

Վարկային կազմակերպության հետ կապված անձանց մոտ տեղաբաշխված միջոցներ՝ բանկային հաշիվներ, ավանդներ, վարկեր և այլ փոխառություններ	**/հազ.դրամ/**
Մնացորդը առ **31.12.2022թ**	204.227,0
տրամադրված վարկեր, ավանդներ	14.848,0
մարված վարկեր,ավանդներ	25.678,0
Մնացորդը առ **31.12.2023թ.**	193.397,0
Տոկոսային եկամուտ	12.785,0

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**հազ.դրամ**
Մնացորդը առ **31.12. 2022**	5.909.856,0
ստացված գումար	
վճարված գումար	
վերագնահատում	8,976,0
Մնացորդը առ **31.12.2023**	5.918.832,0
Տոկոսային ծախս	537.640,0

Գործարքներ	**Պայմանագրի գին /ամսական/**	**Տևողություն**
Տարածքի վարձակալություն	200,0 հազ.դրամ	15 տարի
Տարածքի վարձակալություն	250,0 հազ.դրամ	20 տարի
Տարածքի վարձակալություն	2.500.0 հազ.դրամ	15 տարի

Կազմակերպության և բաժնետիրոջ, բաժնետիրոջ հետ կապակցված անձի միջև կնքված վարձակալության պայմանագրերի համաձայն վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող տարածքները վարձակալվել են՝ Կազմակերպությունն ապահովելու նպատակով:

2023թ-ի մինչև դեկտեմբերի 31-ը Կազմակերպության ղեկավարությանը հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների ընդհանուր գումարը կազմում է 129.996**,0** հազ ՀՀ դրամ: